[redacted]

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, վեցը կողմ, զրո դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացի [redacted] դիմումը բավարարել մասնակի՝

1)հաստատված համարել «Նաիրի» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի օնկոգինեկոլոգիական ծառայության ղեկավար, ավագ բուժաշխատող Արտեմ Ստեփանյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածով 2-րդ կետի 1-ին ենթակետի, 4-րդ ենթակետի, 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների խախտումները և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Արտեմ Ստեփանյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Նաիրի» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իրավասու անձին.

2)մերժել դիմումը ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ, 6-րդ ենթակետերի, 3-րդ կետի 6-րդ ենթակետի, 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների մասով՝ նկատի ունենալով, որ դիմումի մեջ նկարագրված արարքների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված է քրեական պատասխանատվություն:

2.Սույն որոշումն կարող է բողոքարկվել Հանձնաժողովին՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 25-րդ կետի համաձայն:

ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ՝
ՆԱԽԱԳԱՀ՝ **ԻԶԱԲԵԼ ԱԲԳԱՐՅԱՆ**